ՀԽՍՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃԸ ՎԵՐՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Ե. ԽՈՋԱԲԵԿՅԱՆ

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումով իրական նախադրյալներ ստեղծվեցին հայ ժողովրդի ազգային վերածննդի և սոցիալ-տընտեսական վերափոխումների համար։ Դա ամենից առաջ իր արտահայտությունը գտավ հանրապետությունում բնակչության անընդհատ աճի և պրոֆեսիոնալ որակական հատկանիշները բնութագրող տեղաշարժերում։ Պատմական կարճ ժամանակամիջոցում՝ յոթ տասնամյակների ընթացքում, Հայկական ԽՍՀ բնակչությունն ավելի քան հնգապատկվեց։ Այժմ նրա տարածքում ապրում է ավելի քան 3,5 մլն մարդ։

Երեք ու կես միլիոնը, ինքնին վերցրած, թերևս մեծ թիվ չէ, բայց երբ խոսքը Հայաստանի մասին է, այդ թիվը այլ իմաստ է ստանում։ Բավական է ասել, որ Խորհրդային Հայաստանը 1920 թ. ժառանգել էր չափազանց քիչ բնակչություն, ընդամենը 720 հազար մարդ՝ 1913 թ. այդ տարածքում ապրող մեկ միլիոնի դիմաց։ Յոթ տասնամյակի ընթացքում բնակչության շուրջ հընդգապատկումը հազվադեպ երևույթ է։

Հայաստանում ձևավորվող նոր տնտեսական, սոցիալական-քաղաքական կյանքը, բնական է, որ պետք է պայմանավորեր բնակչության վերարտադրության նոր օրինաչափությունների առաջացում։ Այդ օրինաչափությունները, առաջին հերթին, դրսևորվեցին բնակչության բնական աճի՝ բավականին բարձր ծննդի և դրան ուղեկցող՝ մահացության կրճատման մեջ։ 1920-ական թթ. կեսերին Խորհրդային Հայաստանում բնակչության 1000 շնչի հաշվով ծնվում էր 56—58 երեխա։ Մյուս գործոնը ճակատագրի բերումով աշխարհով մեկ ցրված հայ բնակչության համահավաքն էր մայր հայրենիքում՝ Խորհրդային Հայաստանում։ Հանրապետության բնակչության ավելացման հիմնական աղբյուրը եղել է նրա բնական աճը, բայց առանձին փուլերում, մասնավորապես խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիներին, 30-ական թթ. կեսերին և հետպատերազմյան մի քանի տարիներին որոշիչ նշանակություն է ունեցել ինչպես արտասահմանից, այնպես էլ ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից կատարվող ներհոսքը։

Աղյուսակ 1

ՀԽՍՀ բնակչությունը 1920—1988 թթ. (հազար մարդ տարեսկզբին)[1]

Թվականները	Ամբողջ բնակչությունը	Այդ թվում	
		տղամարդիկ	կանայք
1920	720,0	367,2	352,8[2]
1939	1282,3	648,6	633,7
1959	1763,0	842,4	920,6
1970	2491,9	1217,2	1274,7
1979	3037,3	1477,9	1559,4
1988	3457	1695,7	1761,9[2]

1 *Մարդահամարի տվյալներով։*

2 *Ընթացիկ վիճակագրության հաշվարկային տվյալներով։*

Նոր կարգերը սկիզբ դրեցին հայրենադարձության տևական շարժմանը։ Ի տարբերություն մինչ այդ եղած ներգաղթի, այն կամավոր հիմունքներով հանրապետությունում մշտական բնակություն հաստատելու ձգտումն էր։ Սկզբնական շրջանում ներգաղթը դեպի Հայաստան պայմանավորված էր ոչ այնքան տնտեսական, որքան քաղաքական շարժառիթներով, թեև հաճախ տնտեսական ու քաղաքական միտումները միահյուսվում էին։

Խորհրդային Հայաստանում ամեն մի գաղթական օրենքով ճանաչվեց ԽՍՀՄ լիիրավ քաղաքացի։ Համառուսաստանյան ԿԳԿ-ի՝ քաղաքացիության վերաբերյալ կանոնադրության 202-րդ հոդվածի 3-րդ կետով «ԽՍՀ Միության տարածքում ապրող ամեն մի քաղաքացի ճանաչվում է ԽՍՀ Միության քաղաքացի, եթե նա չի հաստատում, որ ինքը օտարերկրյա քաղաքացի է»։

Կիրառվող ժողովրդագրական քաղաքականությունը մեծ ազդակ հանդիսացավ մինչ այդ Հայաստանից արտագաղթած բոլոր ազգությունների զանգվածային վերադարձի համար։ Այդ է վկայում Հայաստան վերադարձող բնակչության ինտերնացիոնալ կազմը։ 1926 թ. հարցման միջոցով պարզվել է, որ Արևելյան Հայաստանից Ադրբեջան և Պարսկաստան արտագաղթած ադրբեջանցիների մոտ 80 տոկոսը վերադարձել և բնակություն է հաստատել իր նախկին բնակավայրում[4]։ Մուսավաթականների տիրապետության օրոք Ադրբեջանի քաղաքներից արտագաղթած հայ բնակչության մի զգալի մասը նույնպես վերադարձավ և մշտական բնակություն հաստատեց իր նախկին բնակավայրերում։ Մինչդեռ Ադրբեջանի գավառներից արտագաղթած բնակչության շուրջ 90 տոկոսը չկարողացավ վերադառնալ և մշտական բնակություն հաստատեց Հայկական ԽՍՀ-ում[5]։ Ադրբեջանի կառավարությունը ամեն կերպ արգելքներ էր հարուցում և արհեստական խոչընդոտներ ստեղծում Ադրբեջանի գավառներից արտագաղթած հայ բնակչության վերադարձի և իրենց նախկին բնակավայրերում բնակություն հաստատելու համար։ Այդ պատճառով էլ միայն Նախիջևանում 1926 թ. մարդահամարի տվյալներով 1917 թ. համեմատությամբ հայ բնակչությունը պակասեց 5 անգամ։ Հին հայկական Նախիջևանի նահանգում 1917 թ. ապրում էր 53,9 հազար հայ բնակչություն (ընդհանուրի 40 տոկոսը), իսկ 1926 թ. ընդամենը 11,3 հազար։ Այդ նույն կարգով հայ բնակչությունը պակասեց նաև Խորհրդային Ադրբեջանի այլ գավառներում։

Հայաստան ներգաղթող բնակչության մի մասը մինչ այդ Պարսկաստան արտագաղթած բնակչությունն էր[6]։ Խորհրդային Հայաստանի հեղկոմի հրատարակած դեկրետով նրանց վերապահվում էր հայրենիք վերադառնալու և նրա լիիրավ քաղաքացին դառնալու իրավունք։ Սա ևս նպաստեց ներգաղթին, որի կազմակերպումը և տեղում բնակչության վերաբնակեցումը դառնում են համապետական գործ։

Արտասահմանից ներգաղթը բնորոշ դարձավ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման հենց առաջին օրից, մասնավորապես այն բանից հետո, երբ 1923 թ. Լոզանի կոնֆերանսում, ի լուր աշխարհի հայտարարվեց Խորհրդային Հայաստանում 300 հազար հայերի ընդունելու պատրաստակամության մասին։ Դրա հիման վրա ԽՍՀՄ-ում Ժողկոմխորհի աշխատանքի և պաշտպանության խորհուրդը որոշում է կազմակերպել արտասահմանից 15 հազար հայերի ներգաղթը։ 1922—29 թթ. արտասահմանից հայրենիք վերադարձան 20,3 հազար հայեր։ Դա տեղի էր ունենում Խորհրդային Հայաստանի համար մի այնպիսի դժվարին պայմաններում, երբ գյուղերում առկա էր ագրարային

---

3 Собрание законов рабоче-крестьянского правительства Союза Советских Социалистических Республик. Л., 1924, с. 364.

4 ՀԽՍՀ Հակտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության կենտրոնական արխիվ (ՀԽՍՀ ԿՊԱ), ֆ. 130, ց. 6, գ. 197, թ. 37, 48, 49։

5 Նույն տեղում, թ. 49։

6 Նույն տեղում, ֆ. 123, ց. 42, թ. 46։ Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ., Երևան, 1926, էջ 68։

գերբնակչությունը, իսկ քաղաքում՝ գործազրկությունը, այն էլ՝ ավելի մեծ չափերով, քան Միության որևէ այլ հանրապետությունում։

Մինչև 1940 թ. հայրենադարձ հայերի ընդհանուր թիվը հասավ շուրջ 75 հազարի։ Այսինքն, 1926—1939 թթ. ժամանակաշրջանում հանրապետությունում ավելացող բնակչության 10 տոկոսը հայրենադարձներ էին։

Հայրենական մեծ պատերազմից դեռևս նոր դուրս եկած երկիրը նյութական և ֆինանսական միջոցներ չունայեց զանգվածային ներգաղթ կազմակերպելու համար։ Կարճ ժամանակամիջոցում, 1946 թ. հունիս—հոկտեմբեր ամիսներին, Հայաստանում հանգրվանեցին 18 801, 1947 թ.՝ ևս 8 521 ընտանիք։ Մինչև 1947 թ. վերջը հայրենիք վերադարձավ 86,5 հազար մարդ։ Դա հանրապետության այն ժամանակվա բնակչության 7 տոկոսն էր։ Հայրենադարձությունն ընդգրկում էր հիմնականում Սիրիայի, Լիբանանի, Հունաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Իրանի, Եգիպտոսի և մի քանի այլ երկրների հայ բնակչությունը։ Հայրենադարձների բնակարանային հարցերի լուծման հետ մեկտեղ նրանք անմիջապես ապահովվեցին համապատասխան աշխատանքով, արտադրական ձեռնարկություններում կազմակերպվեց նրանց մասնագիտական ուսուցումը։ Միաժամանակ լուրջ միջոցներ ձեռնարկվեցին ուսումնառությունը կազմակերպելու նպատակով։

1920—50-ական թթ. մայր հայրենիքում աշխարհով մեկ սփռված հայ բնակչության որոշակի զանգվածների համահավաքի հետ մեկտեղ բարենպաստ պայմաններ ստեղծվեցին նաև բարձր բնական աճի համար։

1920—60-ական թթ. Հայաստանը երկրում ուներ բնական աճի ամենաբարձր ցուցանիշը։ Օրինակ, եթե 1940 թ. Միությունում բնակչության միջին բնական աճը 1000 շնչի հաշվով 13,2 մարդ էր, ապա մեր հանրապետությունում՝ 27,4։ Հայտնի է, որ ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ մեզ մոտ, բնակչությունը բուռն կերպով աճեց հետպատերազմյան տարիներին։

Մեր հանրապետությունում ժողովրդագրական բռնկումը տեղի ունեցավ երկու փուլով։ Առաջինն ընդգրկեց հետպատերազմյան շրջանը և ավարտվեց 50-ական թթ. սկզբին։ Դա բացատրվում էր պատերազմի ավարտով և զորացրումով։ Երկրորդ շրջանն սկսվեց հիսունական թվականների կեսերից և տևեց մեկ տասնամյակ։ Ժողովրդագրական բռնկման այս շրջանին հատուկ բնական աճը պայմանավորված էր ոչ միայն ծնվող երեխաների բացարձակ թվի անընդհատ ավելացման, այլև մահացության, մասնավորապես, մանկամահացության խիստ կրճատման փաստով։ Տարեցտարի ավելացող ծնունդը և բնական աճը 1960 թ. հասան իրենց ամենաբարձր սահմանին։ Այդ տարի ծնվեց շուրջ 75 հազար երեխա։ Դրանից հետո, շուրջ երկու-երեք տարի, ծնվող երեխաների բացարձակ թվի գրեթե կայուն մակարդակը նվազեց։ Սակայն մահացության նվազման հաշվին բնաճության բնական աճը պահպանվեց ընդհուպ մինչև 1970-ական թթ. սկիզբը։ Բայց 1970 թ. ծնվեց շուրջ 19,1 հազարով ավելի քիչ երեխա, քան 1960 թ., այն դեպքում, երբ 1959—1970 թթ. ՀԽՍՀ բնակչությունն ավելացել էր 763,4 հազար մարդով։ Ներքոհիշյալ աղյուսակը բնութագրում է ՀԽՍՀ բնակչության բնական աճի ընթացքը։

1970-ական թթ. սկզբներին ծնվող երեխաների բացարձակ թվի նվազումը, ուստի և բնական աճի դանդաղումը, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ մեր հանրապետությունում բացատրվում է հիմնականում երկու գործոններով։ Դրանցից առաջինը պայմանավորված էր Հայրենական պատերազմով։ Պատերազմների հասցրած տնտեսական վնասները հաղթահարվում են ավելի կարճ ժամանակամիջոցում, քան ժողովրդագրականը։ Պատերազմը բնակչության թվի նվազման և հատկապես նրա տարիքային (ինչպես նաև սեռային) կազմի վրա ներգործում է ոչ միայն այդ պահին, այլև պարբերաբար և տևականորեն։ 60-ական թվականների սկզբներից ծնվող երեխաների բացարձակ թիվը սկսեց նվազել նախ այն պատճառով, որ ամուսնության տա-

ռիթ սկսելով թեակոխել պատերազմի տարիներին ծնվածները, իսկ այդ տարիներին ծնվել էին շատ քիչ երեխաներ։ Դրա հետևանքով Հայկական ԽՍՀ-ում 20—29 տարեկանների բացարձակ թիվը 1970 թ. 17 տոկոսով ավելի քիչ էր, քան 1959 թ.։ Ըստ որում 25—29 տարեկանների թիվը պակասել էր 24, իսկ գյուղական վայրերում՝ 50 տոկոսով։ Վերջին ցուցանիշով ՀԽՍՀ դիրքում էր միայն ՌԽՖՍՀ-ին։ Հենց այս պատճառով էլ այդ տարիներին խստորեն կրճատվեց ամուսնությունը (մանավանդ գյուղական վայրերում)։ Բավական է ասել, որ եթե ՀԽՍՀ բնակչության 1000 շնչի հաշվով 1958 թ. գրանցվում էր 14,8 ամուսնություն, ապա 1969 թ.՝ ընդամենը 7։

Աղյուսակ 2

ՀԽՍՀ բնակչության բնական աճը[7]

Տարեթիվ	1000 բնակչի հաշվով			Ծնված 1000 երեխայից մինչև 1 տարեկան դառնալը մահացել է
	ծնունդը	մահը	բնական աճը	
1913	46,3	23,9	22,4	204
1925	51,5	16,2	35,3	—
1928	56,0	17,0	39,0	—
1940	41,2	13,8	27,4	119
1950	32,1	8,5	23,6	69
1960	40,3	6,8	33,5	50
1970	22,1	5,1	17,0	25,4
1979	22,9	5,6	17,3	26,2
1987	22,9	5,7	17,2	22,6

Այսպես կլինի նաև 1988 թ. մինչև 1990-ականի կեսերը, քանի որ կամուսնանան պատերազմի տարիներին ծնվածների թոռները։ Նաև այդ պատճառով, այդ ընթացքում հանրապետությունում ծնվող երեխաների թիվը կպակասի։ Այսպես, 1970-ականի վերջերին ծնվող երեխաների տարի առ տարի ավելացող թիվը (բարձրացել էր ամուսնության գործակիցը, քանի որ ամուսնության տարիք էին թևակոխում 1950—60-ականի կեսերին ծնված երեխաները) 1986 թ. հասավ կորագծի ամենաբարձր կետին։ 1986 թ. ծնվեց շուրջ 81,2 հազար երեխա։ Մինչդեռ 1987 թ., այսինքն մեկ տարի հետո, ծնվողների թիվը պակասեց, և շարունակելով պակասել 2000 թ. ենթադրվում էր, որ կծնվի ընդամենը 65—70 հազար երեխա, այն դեպքում, երբ բնակչությունը, մինչև 1988 թ. երկրաշարժը կատարած մեր կանխատեսումներով, 1988 թ. տարեսկզբի 3 միլիոն 457 հազարից 2000 թ. պիտի հասներ ավելի քան 4 միլիոն մարդու։

Հայկական ԽՍՀ-ում ծնվող երեխաների բացարձակ թվի նվազումը բացատրվում է նաև սոցիալ-տնտեսական գործոններով, որոնք հանգեցնում են ընտանիքի փոքրացմանը, այսինքն՝ ընտանիքում ծնվող երեխաների թվի նվազմանը։ Զարգացման ներկա պայմաններում ընտանիքի փոքրանալուն նպաստող գործոններից ավելի ու ավելի որոշիչ են դառնում հասարակական արտադրություն մուտք գործելու համար երիտասարդությանը ներկայացվող հարաճուն պահանջները, կանանց զբաղվածության աստիճանը, քաղաքային բնակչության տեսակարար կշռի, բնակչության կուլտուր-կրթական մակարդակի բարձրացումը, կենցաղային պայմանների բարելավումը։ Փոքր դեր չեն խաղում նաև բժշկական սպասարկման բարելավումը, մահացության կրճատումը, ընտանիքի անդամների թվի ներընտանեկան կարգավորման հնարավորությունները, ընտանիքի բյուջեի կազմավորման գործում կնոջ մասնակցության աստիճանը, երեխաների դաստիարակության, խնամքի, ուսուցման

[7] Армения в единой семье народов СССР. Ереван, 1972, с. 26. Народное хозяйство Армянской ССР в 1987 году. Ереван, 1988, с. 176.

նկատմամբ պահանջների աճը։ Այս գործոններն իրենց որոշակի ազդեցությունն են ունենում բնակչության բնական աճի վրա, ի հաշիվ ծննդի նվազման։

Հայկական ԽՍՀ-ում ծննդի նվազումը բացատրվում է նաև բժշկական սպասարկման և, ընդհանրապես, նյութակուլտուրական ու կենցաղային պայմանների բարելավմամբ։ Դա այլ գործոնների հետ մեկտեղ հանգեցնում է մահացության կրճատմանը։ Երեխաների կենդանի մնալու հավանականությունը ընտանիքի միջին չափի կայունացման և նրա ներընտանեկան մեծությունը գիտակցորեն կարգավորելու երաշխիք է։ Ծննդի ցածր մակարդակը չէր կարող ապահովել բնակչության ոչ միայն ընդլայնված, այլ նույնիսկ պարզ վերարտադրությունը։ Բավական է ասել, որ 1913 թ. մինչև 15—20 տարեկան էր դառնում ծնվածների կեսը։ Մեր հաշվարկներով, նույնիսկ 1939 թ., որպեսզի ամեն մի 100 ընտանիք կարողանար ապահովել ընտանիքի պարզ վերարտադրությունը (այսինքն երկու երեխա դարձնել մինչև 30 տարեկան), միջին հաշվով պետք է ունենար 281 երեխա, 1950 թ.՝ 232, իսկ 1970 թ.՝ 213 երեխա։ Դա տեղի է ունեցել մանկամահացության կրճատման շնորհիվ։ Օրինակ, եթե 1913 թ. Հայաստանում յուրաքանչյուր 1000 ծնված երեխայից մեկ տարեկան էր դառնում միայն 80 տոկոսը, ապա 1970 թ. արդեն 97,5 տոկոսը։ Դրա շնորհիվ 1970 թ. Հայկական ԽՍՀ-ում ծնված 55,7 հազար երեխայից մեկ տարեկան դարձավ 54,4 հազարը։

Մահացության այդպիսի կրճատումը հանգեցրել է մարդկանց կյանքի միջին տևողության ավելացմանը, որի շնորհիվ բնակչության բնական աճն ավելի դանդաղ է իջել, քան ծննդի մակարդակը։ Ուստի մինչև 1970-ական թթ. սկիզբը ՀԽՍՀ բնակչության աճի կարևորագույն գործոններից մեկը եղել է մահացության կրճատումը։ Բավական է ասել, որ 1940—1970 թթ. այս գործոնի հաշվին բնակչության բնական աճը 10 000 շնչի հաշվով ավելացավ 87, իսկ 1913 թ. նկատմամբ՝ 135 մարդով (տե՛ս աղյուսակ 2)։ Սոցիալական բնագավառում դա մեր հանրապետության ամենանշանակալից նվաճումներից է։ Մեր հանրապետությունում վերջին տարիների ընթացքում բնակչության 1000 շնչի հաշվով մահանում է 5,7 մարդ։

ՀԽՍՀ-ում բնակչության մահացության ցածր մակարդակը պայմանավորված է երկու գործոնով։ Նախ, զարգացած երկրների և մեր երկրի եվրոպական մասի համեմատությամբ, Հայկական ԽՍՀ-ն ունի խիստ երիտասարդ բնակչության կազմ, որտեղ ցածր է «ծեր» բնակչության տոկոսը։ Մինչդեռ զարգացած երկրները բնութագրվում են «ծեր» բնակչությամբ, որի հետևանքով ցածր է ոչ միայն ծնունդը, այլև բարձր է ընդհանուր մահացությունը՝ մանուկների խիստ պակաս մահացության պայմաններում։ Վաղուց ի վեր բնակչության «ծերացման» բավականին բարձր ցուցանիշներ ունեն Ֆրանսիան, Շվեդիան, Շվեյցարիան, Բելգիան, Դանիան, Անգլիան, ԱՄՆ-ը ԳՖՀ-ն, ԳԴՀ-ն և այլ երկրներ։ «Ծերացման» ուղու վրա են Իտալիան, Ֆինլանդիան, Հյուսիսային Իռլանդիան, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի մի շարք այլ երկրներ։ Երեխաների մահացության նվազումը, որը հանգեցնում է կյանքի տևողության երկարացմանը, որոշակի ժամանակի ընթացքում պայմանավորում է բնակչության տարիքային կազմի փոփոխությունը հօգուտ մեծահասակների։

Երկրորդ, արտադրաուժերի ցածր մակարդակ ունեցող երկրներում, ուր բացակայում է բժշկական պատշաճ սպասարկումը, մանուկների մահացությունը բարձր է, իսկ մանկական մահացության բարձր մակարդակը «նոսրացնում է մարդկանց շարքերը՝ դեռևս ծերության տարիքին չհասած»։ Դա է պատճառը, որ այդ երկրներում բնակչության (հետևապես մահացությունների) ընդհանուր թվի մեջ նվազում է տարեց մարդկանց տեսակարար կշիռը։ Այդպիսի երկրներում տարեց մարդկանց թիվը շատ քիչ է, կյանքի տևողությունը՝ ցածր։ Մինչդեռ երեխաների մահացության նվազման շնորհիվ կյանքի տևողության ավելանալը հանգեցնում է մեծահասակների՝, ուստի և մահացածների ընդհանուր թվում տարեց մարդկանց տեսակարար կշռի բարձրացմանը։ 1980 թ. բնակչության 1000 շնչի հաշվով ԳԴՀ-ում և Հունգարիա-

յում մահացել է 13,4, Ավստրիայում, Անգլիայում, ԳՖՀ-ում, Դանիայում, Բուլղարիայում, Չեխոսլովակիայում, Բելգիայում՝ 11,4—11,6, Ռումինիայում, Ֆրանսիայում, Նորվեգիայում, Լեհաստանում՝ 9,8—10,9 մարդ։ 1940 թ. մինչև օրս Շվեդիայում, բնակչության 1000 շնչի հաշվով, տարեկան մահանում է 10—11 մարդ։ Մինչդեռ մի շարք տարիների ընթացքում մինչև մեկ տարեկան երեխաների մահացությունն անընդհատ նվազում է։ Ավելին, Շվեդիան աշխարհում երկար ժամանակ բնութագրվում էր այդ տարիքի երեխաների մահացության ամենացածր գործակցով։ Մինչև մեկ տարեկան երեխաների ամենացածր մահացությունը 1986 թ. եղել է Ճապոնիայում։ Այստեղ ծնված յուրաքանչյուր 1000 երեխաներից մինչև մեկ տարեկան դառնալը մահացել է հինգ երեխա։ Շվեդիայում մահացել է 6, Հոլանդիայում և Ֆրանսիայում՝ 8, ԳԴՀ-ում և ԳՖՀ-ում՝ 9 երեխա։

ԽՍՀՄ բոլոր այն հանրապետություններում, որտեղ բնակչության տարիքային կազմում բարձր է երեխաների տեսակարար կշիռը, համեմատաբար բարձր է նաև բնակչության կրթական, կուլտուրական և ընդհանրապես սպասարկման մակարդակը, իսկ մանկամահացության ցուցանիշը շատ ավելի ցածր է՝ մահացության ընդհանուր բարձր մակարդակի պայմաններում։ Օրինակ, ընդհանուր մահացության մակարդակը միջինից բարձր է մերձբալթյան հանրապետություններում, ՌԽՖՍՀ-ում, Ուկրաինայում, Մոլդավիայում, մինչդեռ անդրկովկասյան և միջինասիական հանրապետություններում այն ԽՍՀՄ միջինից ցածր է, այնինչ մանուկների մահացությունը վերջիններում ավելի բարձր է։ 70-ական թթ. սկզբին Հայկական ԽՍՀ-ում նկատվում է մահացության ընդհանուր գործակցի նվազում, որը ուղեկցվում է մանկական և պատանեկան տարիքի բնակչության մահվան գործակիցների ավելի արագ իջեցմամբ։ Այսինքն՝ բնակչության բնական աճն ավելացել է ոչ միայն մահացության ընդհանուր գործակցի նվազման համեմատ, այլև կյանքի միջին տևողությունը ավելանալու չափով։ Այդ ընթացքում ԽՍՀՄ-ում, եթե բնակչության մահվան ընդհանուր ցուցանիշը կայունացել է և, նույնիսկ, բարձրանալու միտում է դրսևորել, ապա ՀԽՍՀ-ում մինչև 1970 թ.՝ իջել է, որից հետո դրսևորել է խոքր-ինչ բարձրանալու ոչ հայտնի միտում։ ԽՍՀՄ-ում մանկական և պատանեկան տարիքում մահացության նվազումը ուղեկցվում է մեծահասակների խմբում մահացությունը բարձրանալու հետ՝ բնակչության ընդհանուր թվի մեջ ծերերի տեսակարար կշռի ավելանալու կապակցությամբ։ 1990 թ. կեսերից և հետագայում հենց այդ նույն գործոնի հաշվին մահացությունը կշարունակի բարձրանալ նաև Հայկական ԽՍՀ-ում։ Այսպիսով, 1986—1987 թթ. տվյալներով ծնվողների սպասվելիք կյանքի տևողությամբ ամենաբարձր ցուցանիշն ունի Հայաստանը։ Միությունում միջին հաշվով այն կազմում է 69,8 (տղամարդկանցը՝ 65,0, կանանցը՝ 73,8) տարի։ Հայկական ԽՍՀ-ում 73,9 տարի է, տղամարդկանցը՝ 71,0, իսկ կանանցը՝ 76,2։ Ընդամենը կանանց կյանքի տևողության ամենաբարձր ցուցանիշով բնութագրվում է Լատվիան, որտեղ այն կազմում է 76,6 տարի։ Մինչդեռ ծնվողների սպասվելիք կյանքի ամենացածր տարիներն ունեն Միջին Ասիայում, մասնավորապես Թուրքմենիայում, ուր ընդհանուր ցուցանիշը 65,2 տարի է (տղամարդկանցը՝ 61,8, կանանցը՝ 68,2)։ Դա առաջին հերթին բացատրվում է մանկամահացության բարձր ցուցանիշով։ Այստեղ յուրաքանչյուր 1000 ծնվածից մինչև մեկ տարեկան դառնալը մահանում է 56,4 այն դեպքում, երբ Միության միջինը 25,4 երեխա է։ Լատվիայում՝ 11,3, Լիտվայում՝ 12,3, Բելոռուսիայում՝ 13,4, Ուկրաինայում՝ 14,5, Էստոնիայում՝ 16,1, ՌԽՖՍՀ-ում՝ 19,4, Հայկական ԽՍՀ-ում 22,5 երեխա։

Այսպիսով, Հայաստանում նույնպես կսկսի գործել զարգացած երկրներին հատուկ այն օրինաչափությունը, որ տարիքային խմբի ծայրաթևերից մեկում մահացության նվազումը կկանխորոշի նրա աճը մյուս ծայրաթևում։

Եթե մինչև 60-ական թթ. սկիզբը հանրապետության բնակչության մեխանիկական աճի հիմնական աղբյուրը սփյուռքն էր, ապա հետագայում այն իր տեղը զիջում է անդրկովկասյան հանրապետություններին։ 50-ական թթ.

վերջերից և 60-ականի սկզբներից սկսած Ադրբեջանի և Վրաստանի դաշտավայրային ու լեռնաանասնապահական շրջանների գյուղատնտեսության ինտենսիվացման հետևանքով ազատվող աշխատանքային ռեսուրսների որոշ մասը փոխադրվում է Հայկական ԽՍՀ։ Դրան նպաստեցին մեր հանրապետությունում նոր քաղաքների հիմնադրումն ու հների ընդլայնումը, գյուղատնտեսական նոր հողերի յուրացումն ու նոր ավանների կառուցումը, 60-ական թթ. աշխատանքային տարիք մուտք գործող բնակչության նկատելի նվազումը։

Ադրբեջանից հայ բնակչության արտագաղթը մեծ մասշտաբներ ընդունեց 1970—80-ականների ընթացքում, որը բացատրվում է հայերի և ընդհանրապես այլ փոքր ազգությունների նկատմամբ Ադրբեջանում իրականացվող ազգային արժանապատվությունը ոտնահարող խտրական քաղաքականությամբ։ Հարկ է նշել, որ Ադրբեջանում կիրառվում է հանրապետությունը ադրբեջանականացնելու քաղաքականություն։

Մինչև 1988 թ. դեպքերը, այլ հանրապետություններից Հայկական ԽՍՀ եկող բնակչության մեջ մեծ տոկոս են կազմում հայ երիտասարդները, որոնք գալիս են մայրենի լեզվով բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալու։ Ուսումնառությունից հետո նրանք աշխատանքի են անցնում Հայաստանում։ Դա ևս կարևոր շարժառիթ է դառնում ընտանիքի մյուս անդամների տեղափոխության համար Հայաստան՝ մշտական բնակության։

Հայկական ԽՍՀ բնակչությունը բավական ինտենսիվ կապեր ունի ՌԽՖՍՀ և Ուկրաինայի հետ։ Ըստ որում, եթե մինչև 70-ական թթ. կեսերը Հայաստանն այդ հանրապետությունների հետ ուներ բնակչության մեխանիկական աճի դրական, ապա այդ ժամանակաշրջանից սկսած՝ բացասական մնացորդ։ Դա հիմնականում ընդգրկում է ժամանակավոր արտագնա տղամարդ բնակչությունը, մասամբ երկրի տարբեր քաղաքներ ուսումը շարունակելու նպատակով մեկնած պատանիներին ու աղջիկներին։ Հարկ է նշել, որ արտագնացությունը հիմնականում կրում է անկազմակերպ բնույթ, չի բխում հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման և աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու շահերից։

Հայկական ԽՍՀ բնութագրվում է Միության միջին ցուցանիշի համեմատությամբ բնակչության բավական բարձր բնական աճով (ավելի բարձր ծննդով, ավելի ցածր մահացությամբ)։ Բնական բարձր աճի շնորհիվ 1959—1987 թթ., եթե Հայկական ԽՍՀ բնակչությունն ավելացել է 190 տոկոսով, ապա Միության միջին աճը կազմել է 134,3 տոկոս։ Մեր հանրապետությունն այժմ միութենական հանրապետությունների շարքում բնական աճով և ծննդի մակարդակով գրավում է 7-րդ տեղը։ Բնական աճի Միության միջին ցուցանիշը (1000 շնչի հաշվով). 8,9 մարդ է (ծնվել է 19,8, մահացել՝ 9,9), Հայկական ԽՍՀ-ում՝ 17,2 (համապատասխանաբար 22,5 և 5,7)։ Երկրում ամենաբարձր բնական աճ ունեցող հանրապետությունը՝ Տաջիկստանը (1980 թ. բնական աճը հավասար էր 34,9 մարդու), ամենացածր բնական աճ ունեցող հանրապետությանը՝ Լատվիային (3,7 մարդ) գերազանցում էր ավելի քան 9 անգամ։

Ինչպես տեսնում ենք, առկա է որոշակի տարբերություն երկրի տնտեսական շրջանների և առանձին ազգությունների բնակչության բնական աճի մակարդակների միջև։ Դա բացատրվում է յուրաքանչյուրի պատմական, սոցիալ-տնտեսական ու բնաաշխարհագրական պայմաններով, բնակչության զարգացման ժողովրդագրական օրինաչափություններով, ազգային, կենցաղային սովորույթների և այլ կարգի առանձնահատկություններով։ Միաժամանակ հայտնի է, որ ԽՍՀՄ-ում արտադրաուժերի աճն ուղեկցվում է ազգային հանրապետությունների և, առհասարակ, երկրի տարբեր վայրերի արտադրաուժերի զարգացմամբ և, հետևապես, սոցիալ-տնտեսական մակարդակների տարբերությունների համահարթմամբ։ Դա հանգեցնում է տարբեր ազգերի ու ժողովուրդների կուլտուր-կրթական, պրոֆեսիոնալ և արտադրական որակավորման մակարդակների, գյուղի ու քաղաքի սոցիալ-տնտեսական պայ-

մանների մերձեցմանը։ Ինչ խոսք, սոցիալ-տնտեսական պայմանները (ինչպես նաև արտադրաուժերը) ավելի արագ են փոփոխվում, քան սովորույթները։ Վերջիններին ընորոշ է որոշ պահպանողականություն։ Այդուհանդերձ, սովորույթի ուժը չի կարող իսպառ չեզոքացնել սոցիալ-տնտեսական պայմանների և արտադրաուժերի զարգացման ազդեցությունը բնական աճի կարևոր գործոն հանդիսացող ծննդաբերության մակարդակի վրա։ Ընդհանուր միտումը ծննդաբերության մակարդակի վրա սովորույթի և ազգային առանձնահատկության ազդեցության ուժի, ինչպես նաև գյուղի և քաղաքի միջև եղած տարբերությունների աստիճանական թուլացումն է։ Սոցիալ-տնտեսական պայմանների ընդհանրությունը, ի վերջո, կհանգեցնի տարբեր ազգությունների, գյուղական վայրերում ու քաղաքներում բնակվող կանանց ունեցած երեխաների թվի մերձեցմանը և ամբողջ երկրում ընտանիքների անդամների միջին չափերի գոյացմանը։ Արդեն այժմ արտադրաուժերի զարգացման և սոցիալ-տնտեսական տեսակետից հավասար մակարդակ ունեցող հանրապետություններում, երկրի հատկապես խոշոր քաղաքներում ծննդաբերության մակարդակների միջև տարբերություններ գրեթե չեն նկատվում։ Ինչ վերաբերում է գյուղին ու քաղաքին, ապա դա կարելի է ցույց տալ Հայկական ԽՍՀ օրինակով։ Ընդամենը երեք տասնամյակ առաջ բնակչության 1000 շնչի հաշվով ծնվածների թվով գյուղը քաղաքին գերազանցում էր 13—14 մարդով։ Այժմ այդ տարբերությունը 7—8 մարդ է։ Սոցիալ-տնտեսական պայմանների, սովորույթների, կենցաղի, բնակչության սոցիալական, պրոֆեսիոնալ-որակական կազմի, աշխատանքի բնույթի և գյուղի ու քաղաքի սոցիալ-տնտեսական այլ գործոնների մերձեցման հետ մեկտեղ, դա բացատրվում է նաև դեպի քաղաքներ գյուղական երիտասարդ բնակչության արտահոսքով, որի հետևանքով գյուղի «ծերացման» հաշվին քաղաքը համեմատաբար երիտասարդանում է։

Այսուհետև Հայկական ԽՍՀ բնակչության բնական աճի մակարդակը կիջնի և այն խիստ կդանդաղի 1990-ական թթ. հետո։ Բնակչության 1000 շնչի հաշվով ծնվող երեխաների թվի նվազումը և մահացության կրճատման շնորհիվ կյանքի միջին տևողության երկարումը կհանգեցնեն ՀԽՍՀ բնակչության տարիքային կազմի փոփոխությանը։ Բնակչության ընդհանուր թվակազմում կիջնի երեխաների և կբարձրանա աշխատանքային և թոշակառու տարիքի բնակչության տեսակարար կշիռը։ 2000 թ. թոշակառու տարիքի բնակչության տեսակարար կշիռը զգալիորեն կգերազանցի 1980 թ. մակարդակը։ Դրա հետ մեկտեղ, ՀԽՍՀ բնակչության ծերացման ընթացքի վրա լուրջ ազդեցություն կունենան (դանդաղեցման իմաստով) մի կողմից երեխաների մահացության հետագա կրճատումը, իսկ մյուս կողմից, այնուամենայնիվ, բնակչության ծննդի համեմատաբար բարձր մակարդակը՝ արդեն ծերացման պրոցես թևակոխած երկրների համեմատությամբ։

Դժվար չէ նկատել, որ հոդվածում շրջանցվում են 1989 թ. մարդահամարի տվյալները։ Բանն այն է, որ այդ մարդահամարը չտվեց հանրապետության բնակչության և նրա սեռատարիքային կազմի իրական պատկերը։ Եվ տալ չէր կարող։ Բնավ էլ մտադրություն չունենալով ստվեր գցելու մարդահամարն իրականացնող վիճակագրական մարմինների շատ պատասխանատու և անձնվեր գործունեության վրա, չպետք է անտեսել, որ մարդահամարն անցկացնելու օրերին հանրապետությունում ստեղծված կացությունը չէր կարող օբյեկտիվորեն բացասաբար չանդրադառնալ մարդահամարի աշխատանքների ընթացքի և ստացած արդյունքների վրա։ Այդ իմաստով առաջին պլան է մղվում 1988 թ. դեկտեմբերյան երկրաշարժը։ Հայ ժողովուրդը ակամա կանգնեց ճակատագրական փաստի առջև։ Երկրաշարժը իր ավերիչ ուժով խլեց տասնյակ հազարավոր մարդկանց կյանք (պաշտոնական տվյալներով՝ 30 հազար), ֆիզիկապես ու հոգեպես խեղանդամ դարձրեց հազարավոր մանուկների, երիտասարդների ու ծերերի։ Մարդահամարի օրերին ժողովուրդը դարձել էր թափառական։ Ինչպես հայտնի է, աղետի գոտուց շուրջ 160 հազար մարդ էվակուացվեց, բայց նրանցից 80—90 հազարը չարձագանքեցին

մարդահամարի թերթիկներին։ Հանրապետությունում, մասնավորապես Երևանում, աղետյալները գիշերում էին որտեղ պատահեր։ Եվ այդ պատճառով շատերը հաշվառման չենթարկվեցին։

Երկրաշարժը նորից կրկնվելու ահազդու սարսափը մարդկանց հետապնդում էր ղոր ու գիշեր, քնած թե արթուն։ Այստեղից էլ ոչ թե ծնվեց, այլ է՛լ ավելի ուժեղացավ ժողովրդի վախը ատոմակայանի գոյության հանդեպ։ Ինչ երաշխիք, որ բնության ահարկու խաղը վաղը, մյուս օրը, մեկ ամիս, մեկ տարի անց չի կրկնվի հենց ատոմակայանի շրջակայքում։ Ժողովուրդը սպասողական և ծանր կացության մեջ էր՝ կապված ատոմակայանը փակելու հարցերը լուծելու հետ։

Չմոռանանք նաև, որ շուրջ տաս ամիս հայ ժողովուրդը սպասումների մեջ էր Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ինքնորոշման արդարացի խնդիրը լուծելու համար։ Բայց այն արհեստականորեն ձգձգվում էր և օրը մեկ հնարովի բարդություններ ու դժվարություններ էին ստեղծվում։ Միևնույն է, հենց այդ օրերին էլ, ժողովուրդը, ակնապիշ, լուծումների էր սպասում, Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված արհեստական փակուղուց դուրս գալու ելք էր փնտրում։ Այս ամենն ահա, անտարբեր էր դարձրել աշխատավորությանը և շեղել նրա ուշադրությունը մարդահամարի կարևորությունից։ Արդյունքում սաացվեց այն, որ 1989 թ. մարդահամարը չարտահայտեց հանրապետության բնակչության ճշգրիտ պատկերը։ Մարդահամարի տվյալներով ստացվում է, որ 1989 թ. հանրապետությունում բնակվում էր ընդամենը 3 մլն 283 հազար մարդ։

Մինչդեռ, ինչպես հիշատակվել է, ընթացիկ վիճակագրության տվյալներով 1988 թ. հունվարին հանրապետությունում բնակվում էր 3 մլն 457 հազար մարդ։ Ընդսմին բնակչության կանխատեսման հարցերով զբաղված կազմակերպությունների տվյալներով այդ թիվը մի քիչ ավելի էր։ Ըստ մեր կանխատեսումների ենթադրվում էր, որ այն կազմելու էր 3 մլն 540—3 մլն 550 հազար մարդ։

Ընդունենք, որ բնակչության բնական աճը 1988 թ. կազմել է շուրջ 55 հազար։ Ուստի կստացվի, որ 1989 թ. հունվարին, այսինքն մարդահամարի օրերին, հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակը պետք է կազմեր 3 մլն 512 հազար՝ ըստ ընթացիկ վիճակագրության, և 3 մլն 600 հազար մարդ՝ մեր կանխատեսումներով։ Բայց, դրա հետ մեկտեղ, 1988 թ. ընթացքում մինչ նոյեմբերյան դեպքերը խիստ ավելացել էր բնակչության արտագաղթը՝ ինչպես դեպի Միության այլ հանրապետություններ, այնպես էլ արտասահման։ Բավական է ասել, որ այդ կարգով միայն 1988 թ. հանրապետությունից արտագաղթել է 31,9 հազար մարդ[8]։ Այսինքն 1989 թ. մարդահամարի պահին հանրապետության բնակչության մոտավոր թիվը պետք է կազմեր 3 մլն 470-ից 3 մլն 480 հազար մարդ ըստ ընթացիկ վիճակագրության և 3 մլն 550—560 հազար մարդ՝ մեր կանխատեսումներով։

Եթե այս ընդհանուր թվից բացառում ենք նաև աղետի հետևանքով զոհվածների պաշտոնական տվյալները, որը կազմել է 25—30 հազար մարդ, ապա բնակչության ընդհանուր թիվը, ըստ մեր կանխատեսումների, պետք է կազմի 3 մլն 520—530, իսկ պաշտոնական վիճակագրական տվյալներով՝ 3 մլն 445—3մլն 455 հազար մարդ։

1989 թ. մարդահամարից առաջ տեղի էր ունեցել նաև հայ բնակչության մեծ բռնագաղթն Ադրբեջանից և դրա ազդեցության տակ ու դրա հետևանքով՝ ադրբեջանցիների արտագաղթը Հայկական ԽՍՀ-ից։ Այս բռնագաղթը, որ նախորդեց Հայկական ԽՍՀ-ից կատարվող արտագաղթին, հայ բնակչությամբ ողողեց ոչ միայն մեր հանրապետությունը, այլև Հյուսիսա-

8 Ի դեպ, եթե մինչև 1979 թ. մարդահամարը, հանրապետությունը բնութագրվում էր միգրացվող բնակչության բավականին մեծ թիվ կազմող դրական մնացորդով, ապա այդ ժամանակից սկսած իրավիճակը փոխվում է։ 1979—1988 թթ. տաս տարիների ընթացքում հանրապետությունից արտագաղթողների թիվը ներգաղթողներին դերազանցել է 120 հազար մարդով։

յին Կովկասը, սեր երկրի այլ վայրեր։ Սեփական տունը, ունեցվածքն ու կայքը հարկադրաբար թողած հարյուր հազարավոր տնավեր հայեր դեռ այսօր էլ՝ իրենց փախուստից մեկ տարի անց, վերջնական հանգրվան չեն գտել, չունեն տուն, աշխատանք, ապրուստի կայուն և հուսալի աղբյուր։

Բոլորիս հայտնի է, որ մարդահամարից հետո էլ շատ շուտ հոսեց... 1989 թ. ընթացքում, մասնավորապես հուլիս—սեպտեմբերյան վայրագությունների և հանրապետությունն ու ԼՂԻՄ-ը շրջափակման ենթարկելու և դրանով իսկ պատերազմական պայթուցիկ իրավիճակ ստեղծելու օրերին նորից սկիզբ առավ մեծ բռնագաղթ։

Այս բոլորը թելադրում են հանրապետությունում նոր մարդահամար անցկացնելու անհրաժեշտությունը։ Խնդիրը ոչ միայն բնակչության ընդհանուր թվի, այլև սեռատարիքային կազմի ճիշտ պատկերն ստանալն է։ Չէ որ այդ տվյալները չափազանց կարևոր նշանակություն ունեն ժողովրդատնտեսական պլանավորման, զբաղվածության, արտադրողական ուժերի տեղաբաշխման, լուսավորության ու առողջապահության զարգացման, բնակչության պահանջմունքների բավարարման, բնակարանաշինարարության և արտադրական ու ոչ արտադրական բազմաբնույթ այլ հարցերի համակողմանի և բնական լուծման համար։

Հայ փախստականների ընդհանուր թվակազմում մեծ տեսակարար կշիռ են կազմում աշխատունակ տարիքի (հատկապես ծեր աշխատունակ տարիքի) մարդիկ, իսկ արտագաղթած ադրբեջանցիների թվակազմում՝ անչափահաս երեխաներ։ Մյուս կողմից էլ փախստական հայերը հիմնականում քաղաքային, իսկ արտագաղթած ադրբեջանցիները, գրեթե ամբողջությամբ, գյուղական բնակիչներ են։ Ուստի թեև փախստական հայերը շուրջ 70 հազարով գերազանցում են արտագաղթած ադրբեջանցիներին, սակայն ապագայում հանրապետությունում ծնվող երեխաների թիվը ավելի քիչ կլինի, քան կանխատեսվել էր մինչ այդ։

Հանրապետության բնակչության վերարտադրության ընթացքի վրա դեռևս երկար ժամանակ կազդեն նաև երկրաշարժի պատճառով տեղի ունեցած մարդկային կորուստները։ Չէ որ անասելի աղետը իր հետ սրբեց ու տարավ, խեղեց ու շարքից հանեց բոլոր սերունդներին։ Աղետի հետևանքով միանգամից ոչնչացավ սերունդների հաջորդափոխությունն ապահովող բնակչությունը՝ տարիքային բոլոր խմբերում։

Բնականորեն, այս բոլորի հետևանքով հանրապետությունում ստեղծվել է բնակչության վերարտադրության յուրահատուկ բարդ իրավիճակ, որը թելադրում է ժողովրդագրական հետևանքների ուսումնասիրում և տարածքային ակտիվ ժողովրդագրական քաղաքականության մշակում ու կենսագործում։ Եթե ակտիվ ժողովրդագրական քաղաքականության մշակումն ու կենսագործումը երկրում ծավալվում է աստիճանաբար, փուլ առ փուլ, ապա մեր հանրապետությունում ստեղծված արտակարգ իրավիճակը այս հարցում պահանջում է մտածված և լուրջ մոտեցում։ Հապաղել չի կարելի։ Ակտիվ ժողովրդագրական քաղաքականության սկզբունքների մշակումն ու կենսագործումը պետք է իրականացնել հենց այսօրվանից։ Դրա համար իրական նախադրյալ է ստեղծում տարածքային տնտեսաշվարկի և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում նոր տնտեսական մեխանիզմի արմատավորումը։ Նման պարագաներում կարևոր նշանակություն է ստանում հանրապետությունում այնպիսի ժողովրդագրական քաղաքականության մշակումն ու կենսագործումը, որն էլ ավելի իմաստավորի մայրությունը, նպաստի կնոջ աշխատանքային, հասարակական գործունեության և նրա մայրական պարտականությունների միջև օպտիմալ համամասնության ձևավորմանը։ Անհրաժեշտ է մշակել միջոցառումների մի այնպիսի համակարգ, որը շնորհացնելով անչափահաս երեխաներ ունեցող մայրերի աշխատանքային, հասարակական ակտիվության մինչև օրս ունեցած դերը, համապետական ու հանրապետական բյուջեներով զանազան ճանապարհներով ավելացնի այդ մայրերին հատկացվող միջոցներն այն հաշվով, որ իրական պայմաններ ստեղծվեն

հասարակության նոր անդամի, նոր մարդու ձևավորման, խնամքի ու դաստիարակության գործում մոր ակտիվության դեպ միասին հասարակության մասնակցության ասպիրանի բարձրացմանը։ Հարկավոր է նկատի առնել աղետի գոտում բնակչության սոցիալական ապահովության բազմաբարդ խնդիրները, ընդլայնել հասարակության հաշվին երեխաների խնամքի ու դաստիարակման շրջանակները, բնակչության կենցաղսպասարկման, առողջապահության, կոմունալ և այլ ճյուղերի սպասարկման մակարդակը։

Ինչ վերաբերում է հեռանկարում աշխատանքային տարիքի բնակչության աճի միտումներին, ապա փախստական հայերի ու արտագաղթած ադրբեջանցիների ինչպես թվի, այնպես էլ տարիքային կազմի տարբերության պատճառով, ներկայումս աշխատանքային տարիքի բնակչությունն ավելացել է, բայց ապագայում այն ավելի քիչ կլինի, քան կանխատեսվում էր մինչև 1988—1989 թթ. դեպքերը։

Դրա հետ մեկտեղ, հարկավոր է նկատի առնել, որ տարերային աղետի հետևանքով հանրապետության աշխատանքային ռեսուրսները նվազեցին և ապագայում կշարունակեն նվազել՝ հաջորդաբար աշխատանքային տարիք թևակոխող բնակչության կորստի և խեղանդամ դառնալու պատճառով։ Բայց տարերային աղետը ծնեց բնակչության զբաղվածության միանգամայն նոր խնդիրներ։ Չէ՞ որ սմբողջությամբ ոչնչացան ու շարքից դուրս եկան Լենինականի, Սպիտակի, մասամբ նաև Կիրովականի և բազմաթիվ այլ բնակավայրերի արդյունաբերական ձեռնարկությունները ու այլ հիմնարկներ։ Հյուսիսային շրջաններում, նախնական հաշվարկներով, աշխատատեղերը կորցրել են շուրջ 100 հազար մարդ։ Ուստի մինչև այժմ հանրօգուտ աշխատանքում զբաղմունք չունեցող երիտասարդության, ինչպես նաև աշխատանքային տարիքի փախստական բնակչության հետ միասին այդ բնակչությանն զբաղմունքով ապահովելը այսօրվա առաջնահերթ խնդիրներից մեկն է։

Հասկանալի է, որ ներկայումս զգալի թվով աշխատող ձեռքեր են անհրաժեշտ աղետից տուժած քաղաքների վերականգնման համար։ Դրանք, նախ, կներգրավվեն շինարարության մեջ։ Անհրաժեշտ է քաղաքներում ստեղծել սոցիալական հատուկ կողմնորոշում և բարձր արդյունավետություն ունեցող ճյուղեր։

Անհրաժեշտ է միջոցառումներ մշակել հասարակական արտադրության ճյուղային կառուցվածքի հետագա կատարելագործման ու դինամիկ զարգացման ուղղությամբ զբաղմունքի բոլոր ասպարեզների (այդ թվում՝ կոոպերացիայի և անհատական աշխատանքային գործունեության հետագա մասնավոր քաղաքականություն կիրառելու) ներդաշնակ զարգացման, նյութական արտադրության և ոչ արտադրական ոլորտի ճյուղերի միջև աշխատուժի բաշխման համամասնությունները հոդուտ վերջինիս ապահովելու համար։ Մինչև 2000 թ. հանրապետությունում լրիվ զբաղվածություն ապահովելու համար հարկ կլինի ստեղծել լրացուցիչ նոր աշխատատեղեր, որոնց 88—90 տոկոսը բաժին կընկնի աշխատանքային տարիք մուտք գործող բնակչությանը, իսկ մնացածը՝ անային անտեսությունից եկող հանալրմանը։ Հարկավոր է նկատի առնել նաև երկրաշարժի հետ կապված նոր աշխատանքային տեղեր ստեղծելու հարցը։

РОСТ НАСЕЛЕНИЯ АРМССР ЗА ПОСЛЕДНИЕ ДЕСЯТИЛЕТИЯ

Член-корр АН АрмССР В. Е. ХОДЖАБЕКЯН

Резюме

С восстановлением государственности в Армении были созданы реальные предпосылки для возрождения армянского народа. Это в первую очередь выразилось в непрерывном росте численности населения республики, сдвигах в его социальной и профессионально-квалификационной характеристиках. За короткий исторический период,

семь десятилетий, население Армении возросло почти в пять раз. До середины 1960-х гг. в росте численности населения республики важную роль, наряду с естественным ростом, играло и положительное сальдо миграции. Вплоть до 1960 г. Армянская ССР характеризовалась наивысшим в стране естественным приростом населения: помимо высокой рождаемости здесь был и относительно низкий уровень смертности. С середины 1960-х гг. понижение уровня рождаемости сопровождалось некоторым снижением уровня смертности, вследствие чего темпы понижения уровня естественного прироста были довольно низкими. Важным фактором изменения численности населения республики является механическое движение населения. Положительное сальдо миграции, наблюдавшееся как из-за границы, так и из других регионов страны, в частности из республик Закавказья, было характерно для Армении до конца 1970-х гг. Однако уже с начала 1980-х гг. наблюдается отрицательное сальдо миграции, растет численность выезжающих как за границу, так и в другие регионы страны. На процесс движения населения существенное влияние оказало декабрьское землетрясение 1988 г. Стихийное бедствие унесло людей всех возрастов и тем самым нарушило нормальную воспроизводственную структуру населения республики. На численность и состав населения республики существенно повлияло насильственное выселение армянского населения из Азербайджана в 1988—1989 гг. и являющаяся прямым следствием этого миграция азербайджанцев из Армении в Азербайджан. Исследование тенденций и особенностей движения населения приводит к выводу, что перепись 1989 г. не дала реального представления о численности и составе населения республики, что объясняется тяжелой морально-психологической атмосферой и социально-экономическим положением. Реальная численность населения республики в дни переписи должна была составить не 3283 тыс., а 3550—3560 тыс. человек.